№ 4 Յունվարի 19 (31) 1879 Յունվարի 19 (31) № 4

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ քաղաքապետի ընտրութեան մասին։—Ներքին տեսութիւն։ Նամակ Նոր-Նախիջևանից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Գերմանիա։ Արտաքին լուրեր։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Ֆելիետօն։

ԴԱՐՁԵԱԼ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մենք լսում ենք որ յունվարի 16-ին Դումայի մէջ կայացած ձայնաւորների դռնափակ նիստը ոչինչ հետևանքի չը հասաւ։

Այդպէս էլ հարկաւոր էր սպասել։

Ձայնաւորները տեսնելով որ իրանց վիճաբանութիւնները ոչինչ հետևանքի չեն հասնում, վճռեցին մի յանձնաժողով ընտրել մի տաս կամ տասն և հինգ անդամներից բաղկացած, որին յանձնեցին մշակել խնդիրը թէ ի՞նչ քաղաքագլուխ պէտք է ընտրել և անուանել կանդիդատներին։

Այդ յանձնաժողովից էլ, մենք հաւատացած ենք, ոչինչ չի դուրս գայ։

Ամեն երկրում, որտեղ ընտրողական սկզբունք կայ, հնարաւոր է մի համաձայնութեան հանել ընտրելու անձնաւորութեան վերաբերութեամբ, երբ հաւաքվում են առանձին խմբերով մի և նոյն ֆրակցիայի մարդիկ, համախոհ անձինք։ Բայց ընտրել մի յանձնաժողով անձնաւորութիւնը որոշելու համար,—դա ոչ մի տեղ տեսնված չէ։

Այդ ձևով ընտրել մի անձնաւորութիւն անհնարին է, որովհետև յանձնաժողովի անդամները չեն խմբվում իրանց սեփական կամքով, չեն միանում այն պատճառով, որ համախոհ են իրանց մտքերի, հայացքների, համոզմունքների և ուղղութեան մէջ, այլ այն պատճառով, որ մեծամասնութիւնը նրանց ընտրել է, նշանակելով գաղափարներով ամենատարբեր մարդիկներին մի և նոյն յանձնաժողովի անդամներ։

Ի՞նչ ներդաշնակութիւն կարող է գոյանալ այն անձինքների մէջ, որոնք պատկանում են ամենատարբեր հայեացքներին։

Մեր կարծիքով միակ միջոց է քաղաքագլխի ընտրութեան մէջ հասնել որ և է հետևանքի, այն կը լինէր որ Դումայի ձայնաւորները մասնաւորապէս հաւաքվելով խորհրդակցէին իրանց մէջ քաղաքագլխի այս կամ այն կանդիդատի մասին։ Բայց ի՞նչպէս։ Հարկաւոր է որ միմեանց լաւ ծանօթ, միմեանց մէջ գաղափարներով և հայացքներով համախոհ անձինք փոքրիկ խմբով մէկ տեղ ժողովէին և կատարելապէս ազատ կերպով խորհրդակցէին ընտրութեան մասին, որոշելով իրանց կանդիդատ։ Մի երկրորդ, երրորդ և չորրորդ խումբ նոյնը կանէին։

Այդպիսով ամբողջ Դուման բաժանվելով երեք, չորս, հինգ խմբերի վրա, ընտրութեան օրը կառաջարկվէին միայն երեք, չորս հինգ կանդիդատների անուններ։

Եթէ ջոկ ֆրակցիաների մէջ համաձայնութիւն չը կայանայ, ընտրութեան օրը երևան կը գան այնքան կանդիդատների անուններ, որքան ձայնաւոր կայ։

Ձայները կը բաժանվեն և ոչ մի կանդիդատի վրա չի միանայ ձայների բաւական մեծ բազմութիւն, որ վերջապէս մէկը ընտրված լինի։

Ու նոյն անյարմարութիւնն ունի յանձնել իր իրաւունքը կանդիդատներ որոշելու ընտրված յանձնաժողովին։

Նախ տարբեր գաղափարների տէր մարդիկներից բաղկացած յանձնաժողովը երբէք չի հասնի մի ընդհանուր կանդիդատի որոշելուն, այլ յանձնաժողովը կառաջարկի Դումային անպատճառ մի քանի կանդիդատներ և յետոյ Դուման էլ իր կողմից կաւելացնի արդէն յանձնաժողովից ներկայացրած անունների վրա կանդիդատների հազար ու մի ուրիշ անուններ։

ՖԵԼԻԵՏՕՆ

Վաղուց էի ուզում ֆելիետոն գրել։—Մասկարադ և ֆելիետոն։—Ի՞նչից սկսեմ ֆելիետոնը։—Մեղայ։—Եզու

Առանց համախոհ մարդիկնե-րից բնական կերպով կազմված Ֆրակցիաների՝ Դուման երբէք չէ հասնի քաղաքագլխի ընտրու-թեանը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

5 յունվարի

Յունվարի 3-ին մեր թատերասէրները ներկայացրին «Թուղթ խաղացողի կեանքը»։

Որովհետև այս պիեսայի յայտնուելը հայոց բեմի վրա նոր բան չէ, ուրեմն նորա բովանդակութիւնը մեր բանասէրներէն շատերին յայտնի է, և մենք այստեղ աւելորդ կը համարենք ծայրէ ի ծայր պատմելու նորա ֆաբուլան։

Բեմական հմտութիւնը (ես առնում եմ բառը իւր ընդհանուր իմաստով), որ ի վաղուց յետէ մտած է ի չարս կատարելագործուած ազատ արուեստների, որ արդէն հիմնովին և ամենայն կողմանէ մշակուել է, և որի հեղինակներն, ինչպէս Սոֆոքլ, Եւրիպիդ, Շեքսպիր, Շիլլեր, Գեօթէ, Գոգոլ և այլ հազարներ իրենց բոլոր մտաւոր ոյժն, խելքի հանճարն ու ստացած գիտութիւնն թափել են նրա վրա, ասել պէտք է որ բեմական հմտութիւնը արդէն այն հիմնաւոր գիտութիւններէն մինն է դարձել, որի իմաստասիրելը կը պահանջէ ոչ միայն ժամանակ ու մտաց ճիգ, այլ և աշխատանք և բնատուր քանքար։ Բացասիրտ կը խոստովանիմ ամենի առջև, որ ես չունիմ այդ գիտութիւնն, որոյ օրէնքներով և կանոններով սպառազինած կարող լինէի հանդէս դուրս գալու իբր քննիչ և դատաւոր, և այդ պատճառաւ ամենևին չեմ համարում ինքս և կարդացողին ես կը խնդրեմ չը համարել այս դրուածքս թատերական դատաքննութիւն։ Իսկ իւր անձնական տպաւորութիւնը յայտնելն, կարծեմ, թոյլ տուած է ամեն մահկանացուի։ Ուրեմն ինչ որ կասեմ, խնդրում եմ հասկանալ և ընդունել իբր լոկ իմ սեփական տպաւորութիւնը և կարծիքը և ոչ իբր յաւիտենական, անեղծանելի օրէնք։

Ուրեմն սկսենք մեր խօսքը։

Ներկայացնողներն էին օրիորդք Եւգինէ Ալաճալեան, Խատամեան, և Քէլլէ-Շահինեան, իսկ երիտասարդք Պողոս և Ա. Սալթիքեանք, Ղուկաս Ալաճալեան, պ. պ. Խատամեան, Ճիպճեան, ***, Փոփով, Բացախ։

Մեր թատրոնն էր մի ախոռ, վերէն, վայրէն և ի չորից ծագաց աշխարհի ցուրտ ու քամի էր փչում։ Հանդիսատեսները տաք մուշտակի մէջ փաթաթուած, ոտքերը խորունկ ու տաք քալոշներ «տիրիլ տիրիլ կը դողային»։ իսկ բեմի ետև, ուր կրկնապատիկ աւելի էր ցուրտը (—3°), խեղճ երիտասարդները թեթև սիւռթուք հագած և քնքոյշ օրիորդները թղթի պէս բարակ ձորձով... ով որ կուրծքի մէջ սիրտ ունէր առանց սարսափի չէր կարող նայել այս բանի վրա։

Եղբայր նախիջևանցիք, միթէ մեղք կը լինէր հոգուներուս, եթէ մենք մի առաւել ապահով և յարմար պատսպարան ունենայինք թատերախաղութեան համար, որ զբօսանքների մէջ ամենազուարթեան համար, որ զբօսանքների մէջ ամենաազնիւն է..... Մարդուն մէկը նոյն իսկ թատերախաղութեան օրը լինէ ասաց, որ նախիջևանցիք տարին տարեկան Դոստովի թատրոնը և դիմակահանդէսը (մասքառատ այցելելու համար) մօտ ի մօտոյ 5000 մանէթ են մսխում։ Եթէ իրաւ մեր տարեկան մսխած փողը, այդ երկու բանի համար, վերը յիշած գումարին կը հասնի, կամ փոքր մի պակաս, այն ժամանակ մեղ անհերելի էր արդէն այդ հանգամանքի վրա մեր ուշքը չը դարձնել։

Մեր թատրոնի (դու հասկացիր ցուրտ ախոռ) պարագայքը, ասես թէ գիտութեամբ այնպէս էր դասաւորած, որ հանդիսատեսը ամեն բանի վրա պիտի թ..... և դուրս փախչէր։ Եւ այդ շատ հասկանալի է. մի կողմանէ, ինչպէս ասացի, ցուրտը, միւս կողմանէ խեղճ օրիորդների և երիտասարդների կենդանի նահատակութիւնը (ազգային բարեգործական նպատակով, լսում էք) և, վերջապէս, առաջաւոր քաղաքացիների սառնասրտութիւնը և անտարբերութիւնը.....

Խաղացողները իմ վրա այսպէս տպաւորութիւն արին։

Օրիորդ Եւգինէ Ալաճալեանը (Ամալիան) պիեսայի 4 պատկերների մէջ բեմ ելաւ, և այդ չորս անգամն էլ փոխելով իւր հասակը (վասն զի անցքերը իրար հետևում էին բաւական շատ տարիներէ ետև)։ Նախ նա հարսնացու կոյս էր, յետոյ թղթախաղի կին, երրորդ նուազին մայր զաւակաց և վերջապէս թշուառ աղքատ կին։

Լարած մտադրութեամբ հետևում էի նորա խաղի ետևէն. ոչ մի անգամ նա չը շեղուեցաւ իւր դերէն, ամեն անգամ ճիշդ և բնական կատարեց իւր խաղը։ Երբ որ մատաղահաս հարս էր կուսական հրապուրիչ պարկեշտութիւնը երեսին փայլելով, ամօթխածութենէն աչքերը խոնարհած խօսքը հազիւ բերնէն դուրս էր գալիս, ինչպէս որ վայել է տակաւին աշխարհ չը ճաշակած կուսի. իւր հօրացուին հնազանդ և առ իւր փեսան եթէ ոչ խանդաղակաթ, և «աչքի զարնելու» սիրով հարուած, գոնեա արտաքինէն նշմարեցնում էր, որ ապագայումը շատ ընտանեկան երջանկութիւն խոստացող ամուսին պիտի լինի։ Երբ նորա փեսային մեղադրեցին, իբր թէ նա իւր հարսին ընծայել է գողացած զոհարեղէնք, նա այնպիսի բնական ազնիւ ցասմունքով խլեց կրծքէն այդ զարդերը և այնպիսի արհամարհանքով գետնին շպռտեց, որ մաղերս տիգ տիգ կանգնեցան։ Բայց ափսոս որ այս պատետիկական բոպէին հանդիսատեսներէն ոչ մինը չը ծափահարեց, իսկ «մի քանիսը» մինչև անգամ բարձրաձայն ծիծաղեցան։ Եւ շատ անգամ ծիծաղում էին «մի քանիսը», երբ բեմի վրա քստմնելի չարագործութիւն ու գարշելի գործեր էին ներկայացվում, երբ հասկացողի բերանը յակամայս браво! աղաղակելու և ձեռները ծափահարութեան դղրդմունքի պատրաստ էին... Պարոններ, եթէ գնահատիչ չենք կարող լինել, գոնէ մարդավարի լինենք։

Նմանապէս շատ սրտաշարժ տեսարան էր այն, երբ խաղամոլը (игрокъ) ստիպում էր նորան (Ամալիային) խարդախ մուրհակի տակ ձեռք դնել։ Այս ներքին պատերազմը իւր սուրբ պարտքի և ամուսինի խայտառակութեան մէջ սոսկալի ցնցումն կատարեց վրաս։ Չուզէի յիշել այն պատկերը, ուր թղթամոլի վաղչոտ բարեկամը (Վառնէքը) յայտնում էր նորան իւր յանցաւոր սէրը... Այս տեսարանի մէջ մի անմեղ օրիորդ և այն հայ օրիորդ, որի առաջև ասվում էին պիղծ սիրոյ խօսքեր.....եթէ ինձ մնար, գոնէ խնայելով հայ կուսի ամօթխածութիւնը, բոլորովին դուրս կը հանէի պիէսայէն այդ կտորը....Այստեղ ի պատիւ օրիորդ Եւգինէին պէտք է ասեմ, որ նա շատ տկար երևեցաւ... և շատ լաւ արաւ, չէն կենայ. կարծես թէ նա ինքն էլ չը գիտէր թէ ինչ է ասում և ինչ է լսում.... Աստուած տայ որ նա իւր կեանքումը երբէք չը գիտնայ այդ, կնկայ համար անտանելի տանջանքը ու տարաբաղդութիւնը և իւր հոգեկան ոյժը, որ նորան կարող է հարկաւորել առաւել ազնիւ գործերու համար, այդպիսի ամուսնական թշուառութեան մէջ չը սպառեցնէ։

Բայց որ ինչ ինձ միանգամայն ապշեցուց և որ այժմ ես խլում է ինձմէն հնար ու կարողութիւն զգացածս արտայայտելու, այդ էր պիէսայի վերջին պատկերը, ուր օրիորդ Եւգինէն դուրս եկաւ մեր առջև ինչպէս պառաւ կին չարագործի, որի գիտակցութիւնը լի էր իւր մարդու (էրկան) կատարած ոճիրներով, բայց նորա սիրտը փակուած չէր դէպի թշուառականը սրտփփիչ զգացմունք արտայայտելու համար։ Երևակայեցէք ձեզ մի պառաւ կին, որի մազերը ալևորել են և երեսը կնճռվել է առաւել կեանքի աղէտքէն, քան թէ տարիներէն. երևակայեցէք, կրկնում եմ, մի պառաւ, որի երեսի բարի գծագրութիւնը և բերանի անուշ ու սիրտփիչ խօսքերը չեն դադարում դուրս ցայտեցնել նորա անցած գնացած երիտասարդական բարեկրթութիւնը և քնքուշութիւնը....ով որ կեանքի մէջ գէթ մի անգամ այդպիսի օրինակ տեսած լինէր և յետ այնորիկ տեսնէր օրիորդ Եւգինէին այս դերի մէջ, անշուշտ կը խոստովանէր, որ այսպիսի մի կին պատկերացնելու համար, դերասանուհին պիտի ունենայ ոչ միայն բեմական քանքար, այլ և սրտի բնիկ բարութիւն և կենացի շատ առաքինութիւններ։ Խօսքս ինչ երկարացնեմ, ամենահմուտ եւրոպական դերասանուհին այս դերի մէջ չէր կարող գերազանցել օրիորդ Եւգինէին։ Վերջապէս, այս ես չաւելացնել չեմ կարող, որ Ամալիայի դերը, որ, ըստ երևութին, երկրորդական էր, օրիորդ Եւգինէն իւր քանքարի ուժով առաջնակարգ դարձուց։

Օրիորդ Խատամեանն ևս նպաշտի (Լուիզա) դերի մէջ մեծ ընդունակութիւն և աշխատանք ցոյց տուեց։ Սորա մասին թերևս դիպուած կունենամ առաւել երկարօրէն խօսելու ուրիշ անգամ, եթէ մի նշանաւոր դերի մէջ տեսնեմ։

Օրիորդ Քէլլէ-Շահինեանը (Ժուժեթթա) շատ սիրուն պատկերացուց իւր մանկական հասակի դերը, և հանդիսատեսները շատ հաւանեցան նորա ազատ և համարձակ խօսուածքին, որ սովորական երևոյթ չէ մեր փակուած ընտանեկան կեանքում։

Պարոն Պողոս Սալթիքեանը, որ չափազանց դժուար դեր էր առել վրան, առաւել քան թէ բաւականացուցիչ կերպով կատարեց այն։ Մենք ոչինչ նկատելու բան չէինք ունենալ նորան, եթէ նա, առանց նորա էլ իւր շարժուն դէմքին չը տար աւելորդ շարժողութիւն։ Այն էլ պէտք է աւելցնել, որ նորա դերը այնպիսի հաղուագիւտներէն էր, որ Ֆրանսիայի մէջ անգամ ամեն քայլափոխիդ չես գտնի նորա օրինակը, ուր մեաց Նախիջևանի պէս փոքրիկ

ցինք արդէն Հայաստանի ուսումնարաններին) այն ժամանակը, այն ժամանակ պիտի աշխատած մի պատրաստ ուսումնարան գտնել—որ դուռը թակես, որ չը բացվի, ինչ փնտռես որ չը գտնես,—և այդ ուսումնարանը քիչ փոփոխութեամբ դարձնել մեր ուզած ազգաշահ կրթարանը։ Որովհետև դժուար է տարակուսել գտնելու մէջ, վասն որոյ աւելորդ չի լինի հիմիկանց յայտնել թէ ինչ տեսակ դաստիարակներ պիտի լինեն նրա մէջ և ինչ տիպերով։

***

Նոցանից մէկը պիտի լինի երկար, (իսկ կարճ հասակը աչակերտների աչքին պատիւ չի ունենայ) գողտրիկ ձևերով, համեստ շարժվածքով, մեղմ հայեացքով, քաղցր ժպիտով, խարդախ աչքերով, բերանում սրբութիւն, լեզվում ազնիւթիւն, մտքում նենգութիւն, սրտում խաբէութիւն, հոգում գորտ, կարիճ, օձ, մողէս և ինչ կուզես։ Պարապմունքով նա կարող է լինել և հասարակական գործիչ և աստիճանաւոր, դրանից վնաս չը կայ, բացի օգուտը։ Իսկ միւսը պիտի վեր առած հասակին չը նայած, այլ ուժին, որովհետև ոյժը մանուկների համար ևս մի մեծ հեղինակութիւն կարող է ունենալ։ Նա պիտի լինի որչափ տեսքով փայլուն, այնչափ յատկութեամբ մութ, որչափ պարզ, այնչափ պղտոր, որչափ իստակ, այնչափ իստակութեան կարօտ, որչափ համեստ, այնչափ ժպիրհ, որչափ կուկ, այնչափ կոպիտ, որչափ բացախօս, այնչափ ստախօս, որչափ համակրական, այնչափ անդուրական։ Վերջապէս երրորդը պիտի լինի ոչ հատ, ոչ բարակ, ոչ երկար, և ոչ կարճ, ոչ շատախօս և ոչ քիչախօս, ոչ ճարտար և ոչ անշնորհ, ոչ գիտնական և ոչ անբանիմաց, ոչ հեզ և ոչ յանդուգն, այլ մի անորոշ, առանց հոտի, գոյնի, անունի, խօսքի, ձայնի ու լեզուի տէր մարդ. բայց մի պայման—նա պիտի լինի անշուշտ երեսանց միամիտ իբրև աղաւնի և ներքուստ խորամանկ իբրև օձ։ Նա կարող է ունենալ և լաւ դիպլոմ, դիպլոմից էլ վնաս չը կայ, այլ կարելի է երբեմն լաւ տեղ ստանալ։ Ի հարկէ սոքա երեքն էլ պիտի լինեն աշխարհական, որովհետև հոգևորականները մեր դարում պատիւ չունեն։

***

Հաւատացնում եմ, ընթերցող, որ եթէ այդպիսիները ընտրվեն դաստիարակ ու առաջնորդ կրթութեան, կամ լոկ խնամատար ու հոգաբարձու, այնպիսի տաղանդաւոր մարդիկ դուրս կը գան այդ ակադէմիայից, որ Թիֆլիսը էլ բնաւ այսչափ նեղութիւն չի քաշի ամեն անգամ քաղաքագլուխ գտնելու մէջ։ Ահա ակադէմիայի և միւս օգուտը։

***

«Ասացէք խնդրեմ, ինչու զուարճալի ու հաճելի օրեր միշտ քիչ են լինում մարդու կեանքի մէջ» հարցրեց ինձ մի ծանօթ օրիորդ անցած տօնների պատճառը։ Այո, անցաւ տօների, պարահանդէսների, խնջոյքների ու ամեն տեսակ երեկոների սէզօնը և ինչ տխուր տպաւորութիւն թողեցին այդ հանդէսները իմ մէջ, ոչ թէ էնդուր որ հետաքրքիր չէին, այլ նրանով որ արթնացրին յիշողութեանս մէջ մի զարհուրելի հրէշի պատկեր, որ մանկութիւնից սկսած ճնշում է երևակայութիւնս։ Դու տեսել ես, ընթերցող, այն գիժ կովը կամ գոմէշը, որը բոլոր օր արածելով, մթնադէմին տուն կը վազէ կերակրելու իր հորթը ու վճարելու տիրոջը իր տուրքը։ Մէկ էլ տեսար վազեց նա տուն բարանջելով, գլուխը շարժելով, թափթփելով, պոզահարելով ու տրտնդ տալով, կանգնեց իր սովալլուկ ձագի մօտ, տալով իր կուրծքը նրա բերանը ոչ կը-թողի ձեռքը։ Ցանկարծ տեսար առանց պատճառի նա դիւահարվեց, ոտնատակ տուաւ իր խեղճ ձագին և կթող հարսին ու սկսեց գժվել ու յարձակվել սրա, նրա վրա։ Այս օրինակը, ընթերցող, գուցէ քիչ խորթ երևայ քեզ, բայց ինչ անեմ որ հէնց մտնում էի Թիֆլիսի մասկարադները ու տեսնում հայուհիներին զանազան կենդանիների հագուստներով, այս սարսափելի կովը իսկոյն գալիս էր ու դեմ պէս կանգնում աչքիս առաջ։ Եւ ամեն անգամ երբ մտնում էր ինձ մի մասկա (երբեմն էլ չար ատանայի պէս չը գիտեմ ինչի պոզերով) ես սարսափում էի ու մտածում այն փրկարար ծառի վրա, ուր մի անգամ ազատվեցի, երբ հարևանի տանից բաց ընկաւ ու յարձակվեց վրաս կատաղի զազանը. սարսափում եմ և այժմ երբ մտաբերում եմ որ տան տիկինը, մայրը, հայ կինը իր սովալլուկ ձագը, կաթնակեր որդին տանը ձգած հարբեցող ռուս ազախնի յոյսով (ինչպէս և միշտ էլ նրա յոյսով) ընկնում է կըլուրը ու տրտնդ տալիս սրա, նրա առաջ։

Այսպիսի Աստուծու պատժածը էլ կարող է հասկանալ իր սոված քոյրերի ու եղբայրների ցաւը Հայաստանում վայ քեզ Քորաղին, վայ Բեթսայիդա...

***

Ճշմարիտ միանգամայն ուղիղ է պատասխանել Թիֆլիսի մէկ հարուստը միւսին, երբ այս վերջինը խօսել է օրիորդաց ուսումնարանների համար ու հարցրել թէ նա Երբ պիտի բանայ ևս օրիորդների համար մի գիմնազիա։—«Ինչ, գիմնազիա, բացականչել է յայտնի հարուստը, միթէ ես գժվել եմ, որ իմ փողերը դէն գցեմ օրիորդաց ուսումնարան հիմնելու համար, որտեղից դուրս են գալիս ոչ թէ մի գործնական բան սովորած, մի տնտեսական միջոց գտած իր գլուխը պահելու ու մարդուն օգնելու համար կանայք ու մայրեր, այլ միայն փուփուան թիթեռնակներ, դարդակախներ, ցանցարներ ու զեղխամոլներ։» Եւ յիրաւի, երբ մեր օրիորդաց ուսումնարանները (ի հարկէ խօսքս լոկ հայոց ուսումնարանների վրա չէ) լիք են չքաւոր ծնողաց, արհեստաւորների ու չունևոր աստիճանաւորների մանուկներով, ինչով արդեօք պիտի պարապեն նոքա ու հայթայթեն իրանց ապրուստը, երբ ձեռքերը ու շնորքը զարգացնելու տեղ, զարգացնում են գլխաւորապէս երևակայութիւնը ու պճնասիրութիւնը։ Խեղճ այդպիսիները և խեղճ նոցա ծնողքը, երբ օգնական ու ձեռնհաս գտնելու փոխանակ, պիտի խաթաբալա ու պատուհաս ունենան իրանց գլխին։ Ասում են որ Հէրվիէի, Տօլլէի և միւս հանդերձավաճառ մագազիններից դռնէ ի դուռ ընկած կար իմացող են փընտռում, որոնք հէնց տասնապատիկ գնով պարապմունք վեր առնեն իրանց տները, բայց ի զուր, ոչ օգին չեն գտնում, որ մարդավարի կար իմացող լինի. դեռ կար, որ ամենահասարակն է գործնական պարապմունքներից։ Բայց, ինչ եմ ասում. միթէ կլուբ և մասկարադ գնալու համար հարկաւոր է հրաշալի բաներ իմանալ. ինչ պէտք է, երբ լաւ գիտեն տրտինգ անելը, իսկ տրտինգ անելը միթէ երբէմն մի կտոր հաց չէ...

***

Եկաւ Թիֆլիս գերապատիւ հայր Ամբրոսիոսը։ Նա մեծ եռանդով քարոզներ կարդաց եկեղեցիներում, դրդելով ժողովուրդը դէպի ազգասիրութիւն, բայց չիմացաւ...խեղճ քարոզիչը որ բոլորովին կանանց զանէն տարաւ, ամեն անգամ պահելով նոցա ամբողջ ժամեր եկեղեցու մէջ։ Ախ, հայրիկ, ինչպէս դու չը գիտես ժամանակին գալ ու ժամանակին խօսել. միթէ այսպիսի հանդիսաւոր տօներին կարելի է քարոզ կարդալ ու մինչև ժամի եօթը չարչարել քնքոյշ էակներին եկեղեցու մէջ. միթէ դու չը գիտես որ շատերը նոցանից վռազելով վռազում են թատրոն, բալեր, մասկարադներ, rendes-vous-ներ և ով գիտէ ինչ ուրիշ տեղեր։ Չէ, հայրիկ, դու չեպ յետինը որ տեսել է Թիֆլիսը ու լսել մոդայի համար, բայց ինչ է յառաջացրել նա մինչև հիմայ, բացի տրտինգ տալու չնորհը. գնա չուտով, հայրիկ, ուր տեղից եկար, ապա թէ ոչ քու քարոզին բացի քեզ էլ ոչ ոք չի լինի եկեղեցում....

Ուտիացի

ու միաձև ժողովրդով լցուած քաղաքում։ Իսկ երևակայութեամբ ստեղծել չը տեսած մարդուդ բարքը, կերպարանքը ու հոգին, ձեռքս սրտի վրա դրած կարող եմ խոստովանել, որ հեշտ բան չէ։ Սոյն այս պիեսան տեսել եմ Մոսկվայի բեմի վրա. հաւատացնում եմ, որ փորձառու ռուս դերասանը անդամ վրաս առաւել գոհացուցիչ տպաւորութիւն չը կատարեց։

Պարոն Ղուկաս Ալաճալեանի (Ժուժ) համար կարելի է ասել, որ թէև շատ և շատ լաւ ձևացուց իւր դերը, բայց նրա դերը Վառնէգինի չափ դժուար չէր։

Պ. Խատամեանին ես գերազանց կանուանէի, եթէ իւր բնական ամօթխածութիւնը թատրոնի չէմքի ետև թողնէր։ Դերասանի արժանաւորութիւնը իսկ այն բանի մէջ է, որ բեմի վրա չը նմանի ինք իրան, այլ առնու իւր ներկայացուցած անձին կերպարանքը։ Ուրեմն մեր խրատը պ. Խատամեանին այս է, որ նա մի փոքր բռնաբարէ (ի հարկէ, բեմի վրա) իւր բնածին ամօթխածութիւնը։ Չեմ կարող չը յիշարել բարեկամս, պ. Յովհաննէս Պապասինեանի կարծիքին, որ ասում է թէ պ. Խատամեանը առաւել յաջողակ է կատակերգութեան, քան այլ թատերական խաղերու մէջ։

Պ. Ճիպիճեանը (Ռուսոլֆ) իւր խաղի մէջ ցուցուց իւր բնական խելքը և ընդունակութիւնը։ Դորա վրա մեր յոյսը մեծ է, որ մի օր, քաջ սերտելով բեմական ազնիւ արուեստը մեծ քանքար կը փթթեցնէ իւր մէջ։

Հասարակօրէն խօսելով, ես խորհուրդ կուտայի մեր երիտասարդներէն մի քանիսին մի փոքր աւելի սերտել իրանց դերերը և շատ յոյսեր չը դնել յուշարարի (սուֆլյոռ) վրա։

Պ. Փոփովի (Ճանապարհորդ) մէջ տեսանք ժրաջանութիւն ևս և սէր դէպի թատրոն։

Պ. Ա. Սալթիքեանի (Ալբերտ) բոլոր պակասութիւնը այն էր, որ չափէ դուրս ամօթխած էր։

Իսկ թատերասիրաց ամբողջութիւնը իմ վրա սաստիկ ախորժ և սփոփարար ներգործութիւն ունեցաւ. ամենքը առհասարակ կատարեցին իրանց դերերը շատ բաւական և բարեխղճութեամբ։ Ժողովուրդը չափազանց գոհ մնաց, և սորա ապացոյցը այն է, որ հէնց միւս օր ցանկութիւն յայտնեց կրկին անգամ ներկայանալու նոյն իսկ խաղին, եթէ հնար կը լինի երկրորդելու այն։

Ներկայացման նպատակը, ինչպէս լսում եմ, այն էր, որ կարողանան մի թատրոնական դուսար կազմել և նորա վրա աւելցնելով այս և ուրիշ կերպ հաւաքած փողեր (կամաւոր տուրք, պարգև, նուագահանդէսէ ժողոված փող, և այլն և այլն) թատրոնի հարցը հաստատուն ոտքի վրա կանգնեցնեն Նախիջևանի մէջ։

Այժմ վերստին դարձնելով խօսքս օրիորդ և երիտասարդ թատերասէրներուն, հրապարակաւ յայտնում եմ (թերևս իմ հետ և մեծագոյն մասը Նախիջևանի բանասէրներին) իմ խորին և անկեղծ շնորհակալութիւնը ևս և իմ զարմացման հարկը Եղիշէ Ալաճալեանին, օր. Խատամեանին, օր. Քէլլէ-Շահինեանին, Պօղոս Սալթիքեանին, Ղուկաս Ալաճալեանին, պ. Խատամեանին, պ. Ճիպիճեանին, պ. ***ին, պ. Փոփովին, Ա. Սալթիքեանին, պ. Եառալեանին (յուշարար)։ Նը-մանապէս չեմ կարող թաքցնել անունները հետևեալ պարոններին, Գաբր. Խաչատուրեանին, Խ. Զալխուշեանին, Մկրտ. Անկլիչանեանին, Մինաս Պալապանեանին, Խոռոզեանին և այլ շատերուն, որոնք իւրեանց ուղղակի և կողմնակի կարեկցութեամբ յառաջ տանում են մեր թատրոնական հարցը։ Իսկ պ. Ցարութիւն Սագիրեանն ինձ ասաց, որ նրա հայրը, մեծապատիւ խաչերես Սագիրեանը պատրաստ է 1000 ռուբլ զոհելու, երբ որ թատերասէրք մտադիր լինեն հիմքը դնելու Նախիջևանի հայոց թատրոնի չէնքի։ Ուրեմն, թող ընդունեն նոքա ևս իմ խորին շնորհակալութեան հաւաստիքը։

Սիլվիկ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Լսում ենք, որ Ռ. Պատկանեանցը մտադիր է ճանապարհորդել հետևեալ տեղերը. Կ. Պոլիս, Էրզրում, Վան, Մուշ, Իզմիր, Զէյթուն, Սաթուն, Ղարս, Անի, Արարատեան նահանգ, գուցէ և Պարսկահայք։

—

Մեզ գրում են ԱՍՏՐԱԽԱՆԻՑ. «Ամեն տեղ «Արարատեան ընկերութեան» համար նուիրատուութիւններ հաւաքեցին և հասցրին ուր հարկն է, միայն մեր քաղաքը այդ ընկերութեանը ոչինչ չը նուիրեց։ Այսպիսի անտարբերութիւնը ամօթ է բերում բոլոր աստրախանցիներին։ Ցանկալի կը լինէր, որ այստեղի հարուստներից մէկը ստորագրութիւն բաց անէր յօգուտ «Արարատեան ընկերութեան»։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ գրում են. «Երբ դիմում ես մեր երիտասարդներին առաջարկելով նրանց գրվել որ և է հայ լրագրին, նոքա արհամարհանքով պատասխանում են. «Էհ, բան չունես, հայն ինչ է, որ նրա լրագրին ինչ լինի. արժէ միթէ գրվել հայ լրագրին։ Աւելի լաւ չէ դրամը օգտաւէտ կերպով գործածել և օտար լրագրներին գրվել։» Հարցնող լինի այդ պարոններից, ովքեն իրանք, որ այդպիսի արհամարհանքով խօսում են հայերի մասին, ինչ ազգութեան են պատկանում. ֆրանսիացի են, գերմանացի, իտալացի, ռուս, թէ անտառներում մեծացած անբան վայրենի անասուններ»։

—

Մեզ հաղորդում են ԱՍՏՐԱԽԱՆԻՑ, որ այնտեղի հայ ընտանիքներից արտաքսված է մայրենի լեզուն։ Հասարակութիւնը չափազանց շը-ռայլ կեանք է վարում։ Բարեգործական նպատակով նուիրատուութիւնների անելը Աստրախանում միայն երազում կարելի է տեսնել։ Օրիորդները թերի կրթութիւն են ստանում և ամուսնանալուց յետոյ իրանց ընտանիքի դժբաղդութեան պատճառ են դառնում։ Աստրախանում ռուսերէն երկու երեք բառ իմացողը իրան կրթված է համարում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Վիէննայի «Presse» լրագրին հեռագրում են Բերլինից որ Գերմանիայում առաջարկված օրէնքի նոր պրօէկտը, որ կայսերական սէյմը իրաւունք ունի պատիժներ նշանակել բայխստագի պատգամաւորներին, մեծ աղմուկ է հանել Գերմանիայում։ Բոլոր ազատամիտ կուսակցութիւնները և նոյնպէս պահպանողական կուսակցութեան մեծ մասը հաւատացած են որ պրօէկտը չի ընդունվի բայխստագում։

Գերմանական տէրութիւնը երևի գուշակելով թէ ինչ ընդունելութիւն պէտք է դանի իշխան Բիսմարկի նոր պրօէկտը բայխստագում, աշխատել է տալ մի պաշտօնական յօդուած «Post» լրագրում։

«Կայսրութեան կանցլէր, ասում է յօդուածը, ի հարկէ նախագուշակեց, որ նոր օրէնքի պրօէկտը կը յարուցանի մի յայտնի զարմացում և կընդունվի ընդդիմադրութեամբ։ Իսկ եթէ կանցլէր, այդ բանի վրա ուշադրութիւն չը դարձնելով, վճռեց չը սպասել, որ պրօէկտի ինիցիատիւը տրվի պարլամենտի կողմից, այլ ինքն արաւ առաջարկութիւնը, դա այդ արաւ այն պատճառով որ համոզված է թէ պրօէկտը անհրաժեշտ է Գերմանիայի համար, որովհետև սօցիալիստները ի չար են գործ դնում պարլամենտում խօսքի ազատութիւնը։ Եթէ տէրութիւնը սպասէր որ առաջին քայլը պարլամենտ ունէր, սօցիալ-դեմոկրատներ միջոց կունենային պարլամենտի նիստերի ժամանակ կրկին ի չար գործ դնել խօսքի ազատութիւնը։»

Յօդուածը շարունակում ապացուցանել որ նոր օրէնքի պրօէկտը անհրաժեշտ է Գերմանիայի համար, որտեղ պարլամենտական ազատութիւնը պաշտպանված չէ սօցիալիստների կամայականութեան դէմ։ Պարլամենտի արժանաւորութիւնը, ասում է կիսապաշտօնական յօդուածը, պահանջում է որ պրօէկտը ընդունվի և կայսերական տէրութիւնը դիմում է Բայխստագին, որպէս զի նորա հետ միասին մշակի նոր օրէնքը։

Գերմանական ամբողջ մամուլը գայրացած է այդ օրէնքի պրօէկտի դէմ։ «National Ztg.» լրագիրը անուանում է այդ օրէնքը պատգամաւորների վրա պատիժներ նշանակելու օրէնք։ Լրագիրը ասում է հետևեալը նոր պրօէկտի վրա։ «Եթէ Գերմանիայի դրութիւնը այնպէս է, որ պահանջում է այդ տեսակ պրօէկտի ընդունելը, ուրեմն աւելի լաւ չէ՞ որ ուղղակի արմատական միջոցներ գործ դրվին և չարիքը արմատից հանեն։ Եթէ մենք առհասարակ հասունացած չենք պարլամենտական կառավարութեան ձևի համար, թող մեզ այդ պարզ ասեն։ Ազատ վիճաբանութիւնները պարլամենտում անհնարին են, եթէ մեծամասնութիւնը իրաւունք կունենայ պահանջել որ իւրաքանչիւր պատգամաւորը, որ քիչ շատ ազատ խօսեց կամ նրա ճաշակին դէմ մի միտք արտասանեց, իսկոյն պատժվի։ Բայց ի՞նչ օգուտ՝ պարլամենտ առանց խօսքի ազատութեան։ Փոխանակ օգուտի, պարլամենտը այն ժամանակ վնաս կը բերի։ Մինթէ Գերմանիան այնքան տկար է, որ նրա ոյժից վեր է ունենալ մի ազատ հիմնարկութիւն։ Աւելի լաւ է ոչնչացնել պարլամենտը։»

Լրագիրը վերջացնում է իր յօդուածը ասելով որ թող հետևեալ ընտրութիւններում ազգը վերջ դնի պարլամենտական սիստեմային և ընտրի իր համար կառավարութեան այնպիսի ներկայացուցիչներ, որոնք կընդունեն պրօէկտը։

«Germania» լրագիրը անուանում է պրօէկտը երկրորդ քայլ դէպի քաղաքացիների իրաւունքների սահմանափակելը։ Առաջին քայլը լրագիրը համարում էր սօցիալիստների դէմ յայտնված օրէնքը։ Նշանաւոր է որ այսպէս խօսում է կղերական մի լրագիր։ Եթէ պրօէկտը կընդունվի, ասում է կղերական թերթը, այն ժամանակ Բայխստագ էլ ժողովրդի ներկայացուցիչների ժողով չէ լինի։

Մի ուրիշ լրագիր «Vossische Ztg.» լրագիրը չէ կամենում հաւատալ անդամ որ կարելի լիներ հրատարակել այնպիսի խիստ օրէնքներ միայն նրա համար, որ երկու երեք սօցիալիստների կամայականութիւնը զսպվի։ Լրագիրը հաւատացած է որ օրէնքը ուղղված է ամբողջ ընդդիմադրական կուսակցութեան, սակաւամասնութեան դէմ, խօսքի ազատութեան դէմ առհասարակ։ Թող այդ բռնի միջոցներին, ասում է պահպանողական թերթը, հաւանութիւն տայ գալու պարլամենտը, իսկ ազգի ներկայացուցիչների ներկայ ժողովը երբէք չի ընդունի այդ նոր օրէնքը, թէև նրան սպառնալիս լիներ արձակումն կամ կատարեալ լուծումն։

Վերջապէս «Köln. Ztg.» լրագիրը թէև համաձայնվում է որ սօցիալիստների և կղերականների դէմ պէտք է խիստ միջոցներ գործ դնել, պէտք է որ և է միջոցներ ընդունել նրանց վառված ոգին փոքր ի շատէ զսպելու պարլամենտի մէջ, բայց որ իշխան Բիսմարկի օրէնքի պրօէկտը իր այժմեան կերպարանքի մէջ երբէք չի ընդունվի և երբէք օրէնք դառնալու չէ։ Ամբողջ աշխարհի մէջ ոչ մի պարլամենտ չը կայ, որ այդ պրօէկտը ընդունի, ասում է լրագիրը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Վանից մեզ հաղորդում են, որ այնտեղ վախճանվել է մի բողոքական։ Այնտեղ գտնվող միսիոնարը խնդրել է հայոց առաջնորդ Երեմիա եպիսկոպոսից թոյլտուութիւն հանգուցեալին հայոց գերեզմանատանը թաղելու համար։ Միսիոնարի խնդիրքը մերժվել է և բողոքականին մի դաշտում թաղել են։ Այդ անցքից յետոյ հայ հասարակութիւնը խնդրել է պատրիարքից Երեմիա եպիսկոպոսին պաշտօնից արձակել։

—Polit Corr. լրագրին Կ. Պոլսից հեռագրում են յունվարի 13-ին որ Բ. Դրան ստացած տեղեկութիւնների համաձայն, գեներալ Տօտլեբէնը հրամայեց ամրացնել Օրխանիէ քաղաքը Բոլգարիայում, թէպէտ և այս կարգադրութիւնը Բերլինի դաշնագրի հակառակ է։

—Լրագիրներին Կ. Պոլսից հաղորդում են յունվարի 11-ին, որ Միթհադ-փաշան սպառնում է հրաժարական տալ Սիրիան կառավարելուց, որովհետև նրա անունով ռուած ֆիրմանը չէ տալի նրան այն իրաւունքները, որ նրան խոստացած են։ Սուլէյման-փաշային ներողութիւն կը տրվի։

—Կ. Պոլսի «Մասիս» լրագրի մէջ կարդում ենք. Պատրիարքական նախկին փոխանորդ Գեր. Մկրեան Տ. Յովհաննէս քահանայն հինգշաբթի օրն Անգլիոյ դեսպան Ս. Լէյարտի տեսակցութեան գնաց թարգման ունենալով Մ. Չերազ էֆէնտին։ Վսեմ. դեսպանը Ս. Պատրիարք հօր ետ ըրած վերջին տեսակցութեան միջոցին խնդրեր էր որ Լորա Սալիսպըրիի հետ Լոնտրայի մէջ տեսակցող Տ. Մկրեան հօր հետ ինքն ալ տեսակցի։ Սիրալիր ընդունելութենէ և խօսակցութիւններէ զկնի, Տ. Մկրեան Ս. Պատրիարք հօր մէկ նամակը մատոյց, որով Ն. Սրբազնութիւնն իւր ցաւակցութիւնը կը յայտներ Անգլիոյ Վեհ. թագուհւոյն դուստր Էլլայս իշխանուհւոյն մահուան առթիւ. Տ. Մկրեան խնդիր մատուցեր է ի դիմաց Ս. Պատրիարքին նաև Զէյթունցի բանտարկեալ ազգայնոց համար, և անոնց ընդհանուր վիճակին վրայ դեսպանին ուշադրութիւնն հրաւիրելով, օր առաջ ազատութիւններին խնդրեր է։ Վսեմ. դեսպանն ալ ամեն ջանք ընել խոստացեր է։ Նոյնպէս Փոքր-Ասիոյ մէջ տարածուած Չէրքէզներուն ասպատակութիւններն և մասնաւորապէս Նիկոմիդիոյ գաւառին Չէրքէզներէ պաշարուած ըլալը, վերջին օրերս ալ Պարտիզակէն քաջ երիտասարդի մը սպանութիւնը ծանուցանելով գանգատեր է։ Դեսպանն յոյս տուեր է թէ մօտ օրերս ամեն կողմ ժանտարմներ պիտի հաստատուին և բարեկարգութիւններ ի գործ պիտի դրուին. ուստի «վստահութիւն ներշնչեցէք ժողովրդեան» ըսեր և սիրալիր քաղաքավարութեամբ բաժնուեր են։»

—«Մասիս» հաղորդում է հետևեալը. «Այս առաւօտ Մ. Չերազ էֆէնտի Ս. Պատրիարք հօր կողմանէ Անգլիոյ դեսպանատունն երթալով դեսպանատան առաջին քարտուղար Պ. Սմայթի հետ տեսակցեցաւ, որ Վսեմ. դեսպանին կողմէ իմացուց թէ Հալէպի Անգղ. հիւպատոսէն ստացուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Հալէպի մէջ բանտարկեալ Ուզնեցի Հայ ընտանիքները դեկտ. 16-ին արձակուեր, և կուսակալէն 16000 ղրշ. ճամբու ծախք ստանալով Զէյթուն վերադարձեր են։ Մարաշի բանտարկելոց համար ալ տեղեկութիւն տուեր է թէ Հալէպի Անգղ. հիւպատոսն արդէն Մարաշ հասած է անոնց ազատութիւնը ձեռք բերելու համար, և այսօր վաղն անոր հեռագրին կը սպասուի։ Իսկ մայրաքաղաքիս մէջ բանտարկեալ եպիսկոպոսին և երկու ընկերաց արձակմանն համար դեսպանն արդէն Բ. Դրան միջնորդած է, և կը յուսայ որ մէկ երկու օր յանձնուին Պատրիարքարանի։»

—Լրագիրները հաղորդում են, որ անգլիական դեսպանը Ս. Պետերբուրգում դիմել է իշխան Գորչակովին հարցնելով, թէ ինչպէս է մտադիր վարվել ռուսաց կառավարութիւնը, եթէ Աֆգանիստանի էմիր Շեր-Ալի ճշմարիտ իրագործի իր դիտաւորութիւնը գնալ Ս. Պետերբուրգ։ Իշխան Գորչակով ասել է, որ դեռ վաղ է պատասխանել այդ հարցին, բայց այնու ամենայնիւ ռուսաց կառավարութիւնը Շիր-Ալիի Պետերբուրգ գալու դիտաւորութիւնը Անգլիայի համար վտանգաւոր չէ համարում։ Շիր-Ալիին Ռուսաստանը ինչպէս հարկն է կը հիւրընկալէ, բայց մի և նոյն ժամանակ նա չի մոռանայ իր միջազգային պարտականութիւնները։

—«Polit. Corr.» լրագիրը հաղորդում է, որ բոլգարական լրագիրները դրդում են բոլգարացիներին ապստամբվել Թիւրքիայի դէմ և չը թոյլ տալ, որ Արևելեան-Ռումելիայում նորից սկսվի Թիւրքաց տիրապետութիւնը։

—Բուդա-Պէշտից հաղորդում են որ տարածված լուրը իբր թէ Բօսֆորի վրա երևեցաւ ժանտախտի պէս մի ցաւ, անստոյգ յայտնվեցաւ։

Խմբ. Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՄԻԱԿ ԴԻԵՊՕ արծաթած, և ոսկեզօծած իրեղէններիւ, (սեղանի, թէյի և այլն) Կրիստօֆլ և ընկ. (Christofle et C-°) գտնվում է Թիֆլիսում, Տօլլէի խանութ, Սօլօլակի № 4։

3—6

ՀԱՅԵԼԻՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱՒՈՐ ՐԱՅԳՕՐՕԴՍԿԻ ստացել է մեծ քանակութեամբ հայելիների ապակիներ զանազան մեծութիւններիւ։ Ընդունում է պատուէրներ չափազանց էժան գներով։ Նորոգում է հին և փչացած հայելիներ։ Հայելիները ծախվում են շրջանակներով և առանց շրջանակների։ Աստամանսկայա փողոց, փոստի շէնութեան մէջ, տուն Լօրիս-Մելիքօվի։

3—4

ՐАСПРОДАЖА БЕЗЪ ЗАПРОСА.

По случаю прекращенія розничной торговли и открытія оптоваго склада, назначается **распродажа** по самымъ дешевымъ цѣнамъ, на 25% дешевле обыкновенныхъ цѣнъ, товаровъ: крепъ, ардаганъ, матласе, репсъ, фай. карсъ, кђруасъ, кашемиръ черный отъ 75 к. до 2 р. 30 к. альпага черный отъ 35 к. до 75 к. шали суконныя отъ 3 р. 25 к. до 7 р. 35 к., ковры бархатные, тикъ хольщевый, рубашки полотняныя, и т. п. Въ каравансараѣ Тамамшева, верхній этажъ, противъ гостиницы Кавказъ, №№ 10 и 11 магазинъ **Малакова.**

1—4

ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ Բերնար Իւէչ Միրօվիչ, որ բնակվում է Արսենալնայա Դաւիդովսկայա փողոցների անկիւնում Միրզօեվի տանը, ԸՆԴՈՒՆՈՒՄ է գործերի համար և առաւօտեան 8-10 ժ. և երեկոյեան 5-7։

3—3

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

որ գտնվում էր Գօլօվինսկի պրօսպէկտի վրա Սարաջօվի տանը, այժմ գտնվում է նոյն ԳՕԼՕՎԻՆՍԿԻ պրօսպէկտի վրա, ՇԻՕԵՎԻ տանը, Գերմանական կլուբի և Վէստլէի ֆօտօգրաֆիայի մօտ մի և նոյն սանդուղքով։ Այցելուների համար բաց է ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը։ Հաւաքածուին ՆՈՐ ՆԿԱՐՆԵՐ են աւելացրած։

22—25

Լոյս տեսաւ պ. ՑԱՐՈՑԻ բրօշիւրը—«ՀԱՅՈՑ ՄԱՄՈՒԼԸ Ռուսաստանում և Կովկասի մէջ»։ Գինն է 30 կօպ. Ծախվում է Թիֆլիսի ՐՕԼՕՐ գրավաճառների մօտ։

3—4

ԳՐԻԳՈՐ ՆԱՍԻՐԵԱՆԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ

ստացվել են մեծ քանակութեամբ ՑՐԱԿԻ ԵՒ ՑՐԻԿՕԻ ՍԻՐՐՏԻԿՆԵՐԻ ՇՈՐԵՐ, ուսորդական ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺՕԿԵՏՆԵՐ, ձմեռային ՊԱԼՏՕՆԵՐ և ՎԱՐՏԻԿՆԵՐ, երեխայոց հագուստներ, ՎԵՐԱՐԿՈՒ—ԽԱԼԱՏՆԵՐ զարդերով, նոյնպէս ընդունվում են ՊԱՏՈՒԷՐՆԵՐ զինուորական և քաղաքական հագուստների համար։ Ցոյս ունեմ, որ ինչպէս պատուիրողները նոյնպէս էլ գնողները ԲԱՒԱԿԱՆ ԿԸ ՄՆԱՆ։

27—75

ԹԻՖԼԻՍ Հիւրանոցում Դըվօրցօվայա փողոցի վրա, Սարաջեվի տան պատրաստվում են ըլեններ յունվարի 17-ից առաւօտեան 11 ժամից մինչև երեկոյեան 4 ժամը։ Մուտքը բացից է։

1—4

ДѢВИЦА ищетъ мѣсто КОМПАНІОНКИ или ГУВЕРНАНТКИ. Адресъ: Старокатолическая улица, домъ Чиковани № 10

ՄԷԿ ՕՐԻՈՐԴ ցանկանում է ընկերակցուհու կամ ՏՆԱՑԻՆ ՎԱՐԺՈՒՀՈՒ պաշտօն ունենալ։ Հասցէն, Ստարօկատօլիչեսկայա փողոց, տուն Չիկօվանի, № 10

ОБЪ ИЗДАНІИ ВЪ 1879 ГОДУ ВЪ БАКУ ГАЗЕТЫ

БАКИНСКІЯ ИЗВѢСТІЯ

ГОДЪ ЧЕТВЕРТЫЙ

Цѣна газеты на годъ въ Баку съ доставкой 5 р., на полгода—3 р., на три мѣсяца 1 р. 75 к., въ мѣсяцъ 75 к. Съ пересылкой во всѣ города имперіи на годъ 6 р. на полгода 3 р. 50 к., на три мѣсяца 2 р. на мѣсяцъ 90 к.

Подписка принимается въ Баку въ домѣ Дадашева, на Милютинской улицѣ близъ гостинницы „Кавказъ“ и въ Бакинскомъ Обществѣ Взаимнаго Кредита.

Иногородные адресуютъ свои требованія исключительно: *Въ Баку, въ редакцію Бакинскихъ Извѣстій,*

ОБЪ ИЗДАНІИ ВЪ 1879 ГОДУ

ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКОЙ ГАЗЕТЫ

„ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ“

ГОДЪ СЕДЬМОЙ

Въ 1879 году ***Тифлисскій Вѣстникъ*** будетъ издаваться ежедневно, за исключеніемъ дней послѣпраздничныхъ, по прежней программѣ.

Подписка на 1879 годъ открыта и принимается въ конторѣ редакціи на Эриванской площади, № 3.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

	НА ГОДЪ.	НА ПОЛГОДА:
Въ Тифлисѣ, безъ доставки. . .	10 р.	5 р. 50 к.
» съ доставкой. . .	11 »	6 »
Съ пересылкой по Имперіи. . .	12	6 » 50 »
За границу по почтовому союзу.	15	8 »

Иногородные адресуютъ свои требованія въ Тифлисъ въ редакцію ***Тифлисскаго Вѣстника.***

ՅՈՒՆՎԱՐԻ 19 — ՏԵՂԵԿԱՑՈՅՑ — ԹԻՖԼԻՍ. 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Յունվարի 18-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	53
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1630	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1320	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	229	—
Մարսելի կուրսը 245—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	10	30
Վենայի կուրսը առժէ 121 գլ.	100	—
Դուրեժի քարաթը. . .	5	80
Աւստրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու . .	7	40
„ միւս տեսակը.	7	30
„ չաքարաւազը.	6	—
„ տրանզիտը. .	6	80
„ մաքուր վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	7	40
Միւս տեսակը հին սերմից.	6	70
Բուրդը Թուշի . . .	8	—
„ Թարաքամի .	4	10
Ալիւր Շորագալու . . .	1	80
„ Երևանի. . . .	—	—
Գարին.	1	30
Մոմը բնաճարպի (стеар.)	12	60
Մետաքս Նուխվայ. .	190	—
Կախեթունը. . . .	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	40	—
Ֆրինգոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկօի. . . .	27	—
„ լիվանի . . .	23	—
„ մարտինիկօյինը	18	—

ՀԵՌԱԳԻՐ

Կովկասի և Անդրկովկասի քաղաքները

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կօպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անտոնով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ .	1. 29	11. 57
Րիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ.	
Փօթիից . .	9. 13	
Րիօն . . .	12. 13	
Միխայլօվօ. .	5. 39	1 37
Գօրի. . .	7. 5	4. 8
Թիֆլիս. . .	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ .	5. 22	3, 92	2, 18
Րիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բաքուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիւչի տրակտից երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	կօպ.
Բաց նամակ արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . .	8
Հնդկաստան . , .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալեւիչ ներքին հիւանդութիւններ, Բակստ վեներական և կաշու հ., Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակստ կուրծքի և ներվային հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Բէյխ աչքի հ.։

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Բակստ վեներական և կաշու հ.։

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների։

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ. Բակստ կրծքային և ջղային հ., Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակստ վեներական և կաշու հ., Բէյխ աչքի հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ԹԻՖԼԻՍ. Ախալքալաքեցի Յովհաննէս Յարութիւնեանց. Խնդրում ենք մտնել խմբագրատուն։ Ձեզ սխալմամբ պահոնավագիրը անցեալ տարվայ գրքից են տուել։ Պէտք է փոխել։ Ձեր պահոնավագրի № 322 է և ոչ թէ 234։

—ԹԻՖԼԻՍ. Հանգամջեցի. Նատօի գեղեցիկ սարակները նըկարագրելու համար դուք դեռ շատ երիտասարդ էք։ Մի ժամանակ գուցէ այդ ձեզ կը յաջողվի, բայց այժմ վաղ է։ Սովորեցէք ձեր դասերը։

—ԱԽԱԼՑԽԱ. Ա. Գ. Դ, Ստացանք 70 ր. 56 կօպ., պահոնավագիրներ ուղարկեցինք։ Վաղուց չենք ստանում օր. Եղ. Մ.-ին յօդուածները։

—ԵՐԵՒԱՆ. Ա. Եր. Ի՞նչ է պատահել ուսուցիչներին, մեթէ չեն մտաբերում, թէ ինչ դրութեան մէջ էր ուսումնարանը պ. Ս. Բ.-ից առաջ։

Дозволено Цензурою 18 Января 1879 г. Тифлисъ — Տպարան Յ. Մարտիրոսեանցի — Типографія Мартиросіанца